ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՐԱՐՈՂԱԿԱՐԳԻ ՓՈՐՁԱԳԵՏԻ՝ 23.05.2022 – 30.12.2022 ԹԹ. ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

I. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՐԱՐՈՂԱԿԱՐԳԻ ՓՈՐՁԱԳԵՏԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ներքին արարողակարգային միջոցառումների անցկացման կարգ հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 1831-Ա հրամանը և Հայաստանի Հանրապետության Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության Հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության վարչության փորձագետի աշխատանքների իրականացման ծրագիրը՝ 23.05.2022 – 30.12.2022 թթ. ժամանակահատվածում կատարել եմ արարողակարգային աշխատանքներ՝ հետևյալ ուղղություններով.

1. ՀՀ ԿԳՄՍ նախարարի, նախարարների տեղակալների և վարչությունների պետերի մասնակցությամբ աշխատանքային հանդիպումների, այցերի, նիստերի ընթացքում արարողակարգային աշխատանքների կազմակերպում:

2. Արտագնա և ներքին միջոցառումների ընթացքում անհրաժեշտ պարագաների ապահովում (ՀՀ ԿԳՄՍՆ տարբերանշաններով պաստառ, թղթապանակներ, նոթատետրեր, պայուսակներ, գրիչներ, խմելու ջուր՝ շշերով):

3. Արտագնա միջոցառումների ժամանակ ՀՀ ԿԳՄՍՆ պաշտոնատար անձանց (նախարար, նախարարի տեղակալներ, վարչության պետեր) դիմավորում, ուղեկցում դեպի միջոցառման անցկացման վայր, արարողակարգային ավագության ապահովում, ավտոմեքենաների անցագրերի տրամարդում, փոխգործակցություն պետական այլ կառույցների, գերատեսչությունների, կազմակերպությունների և հիմնարկների հետ:

4. Հայաստանի Հանրապետության Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ներքին արարողակարգային միջոցառումների անցկացման կարգի մշակում:

II. 23.05.2022 – 30.12.2022 ԹԹ. ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հաշվետու ժամանակահատվածում արարողակարգային աշխատանքներ են իրականացվել ներքին և արտագնա միջոցառումների ընթացքում՝ ՀՀ ԿԳՄՍ

նախարարի, նախարարների տեղակալների և վարչության պետերի մասնակցությամբ:

Մասնավորապես, մայիսի 23-ից մինչև դեկտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում մասնակցել եմ ընդհանուր թվով 121 արտագնա և ներքին միջոցառումների արարողակարգային աշխատանքներին. միջոցառումների առավելագույն ծավալը գրանցվել է հոկտեմբեր (19 միջոցառում), իսկ նվազագույնը՝ հուլիս (8 միջոցառում) ամիսներին: Այդ թվում՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարի մասնակցությամբ իրականացվել է 50 արարողակարգային միջոցառում, 71 արարողակարգային միջոցառում՝ Հ ԿԳՄՍ նախարարի, նախարարի տեղակալների, վարչության պետերի համատեղ մասնակցությամբ:

Վարչության մյուս փորձագետի հետ մշակել եմ «Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ներքին արարողակարգային միջոցառումների անցկացման» կարգը, որ հաստատվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի 11 հոկտեմբերի 2022 թվականի N 1831-Ա/2 հրամանով:

Հասարակայնության հետ կապերի
և տեղեկատվության վարչության
արարողակարգի փորձագետ՝ **Արմեն Գրիգորյան**

30.12.2022 թ.